

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺՈՂԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՍԵՐԳԵՑ ՄԱՐԱԲՅԱՆ

Քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության հետևանքով տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այլ խոսքով՝ ժամանակակից քրեական արդարադատության համակարգում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը քրեական դատավարության կարևորագույն և առանցքային խնդիրներից մեկն է:

Տուժողը քրեական դատավարությանը մասնակցում է որպես մեղադրանքի կողմի սուբյեկտ և ունի սեփական շահերը, որոնց ապահովման համար օժտված է դատավարական մի շարք իրավունքներով ու պարտականություններով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59 հոդված): Տուժողի իրավաչափ շահերի շրջանակում են նրան հասցված վնասի վերականգնումը, վնաս պատճառած արարքի հանգամանքների ամբողջական բացահայտումը ու դրա քրեաիրավական ճիշտ որակումը, հանցանք կատարած անձի դատապարտումը և նրա նկատմամբ արդարացի պատիժ նշանակելը: Հետևաբար, քրեական դատավարությանը տուժողի մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար, մյուս կողմից նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 58 հոդվածի համաձայն՝ «1. Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

2. Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը»:

Օրենսգրքի 59 հոդվածի համաձայն՝ «...Տուժող կարող է ճանաչվել իրավաբանական անձը, որին հանցագործությամբ պատճառվել է բարոյական կամ նյութական վնաս: Տվյալ դեպքում տուժողի իրավունքները և պարտականություններն իրականացնում է իրավաբանական անձի ներկայացուցիչը»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «տուժող» հասկացության հատկանիշներին, 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «տուժող» հասկացությունը՝ որպես իրավաբանական կատեգորիա, բնութագրվում է ինչպես իրավական, այնպես էլ դատավարական հատկանիշներով: Որպես իրավական հասկացություն՝ այն արտացոլում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին անմիջականորեն հանցագործությամբ վնաս պատճառելու օբյեկտիվ փաստը: Դատավարական իմաստով այն սահմանում է, թե ինչպիսի պայմաններում և կարգով է հանցագործությունից վնաս կրած անձը դառնում քրեական դատավարության մասնակից՝ ձեռք բերելով դատավարական որոշակի իրավունքներ և պարտականություններ: Քրեական վարույթում անհնար է իրականացնել դատավարական իրավունքներ և պարտականություններ՝ առանց դատավարության մասնակից լինելու, իսկ հանցագործության հետևանքով վնաս կրած անձի դեպքում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

ՌԴ սահմանադրական դատարանը, անդրադառնալով տուժող ճանաչելու հիմնախնդրին, 2005 թվականի հունվարի 18-ի թիվ 131-Օ որոշման մեջ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ անձի՝ սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը քրեական դատավարությունում իրականացվում է ոչ թե նրան ձևական առումով այս կամ այն դատավարական կարգավիճակ տալով, մասնավորապես՝ տուժող ճանաչելով, այլ որոշակի էական հատկանիշների առկայության դեպքում, որոնք բնութագրում են այդ անձի փաստացի կարգավիճակը՝ որպես համապատասխան իրավունքների պաշտպանության կարիք ունեցողի: Դատարանի գնահատմամբ՝ անձի՝ որպես տուժողի իրավական վիճակը դատավարությունում հաստատվում է ըստ նրա փաստացի կարգավիճակի. տուժող ճանաչելու որոշմամբ նա միայն դատավարական առումով է ձևակերպվում տուժող, այլ ոչ թե տուժող է դառնում վարույթն իրականացնող մարմնի կողմից¹:

Վերոնշյալ օրենսդրական կանոնակարգումներից և իրավական դիրքորոշումներից պարզ է դառնում, որ տուժող կարող են ճանաչվել

¹ Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի 2005 թվականի հունվարի 18-ի թիվ 131-Օ որոշումը, <http://www.rg.ru/2005/06/15/opredelenie-ks-dok.html>

բացառապես ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, դրանցից զատ իրավունքի որևէ այլ սուբյեկտ քրեական դատավարությունում տուժող չի կարող ճանաչվել, իսկ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով տուժող ճանաչելու ենթակա սուբյեկտներին (ֆիզիկական և իրավաբանական անձին) որոշելու համար միայն քրեական դատավարության օրենսգիրքը, որը սահմանում է «տուժող» հասկացության միայն դատավարական հատկանիշը, բավարար չէ. այդ հասկացության իրավական հատկանիշը պարզաբանելու համար անհրաժեշտ է նաև վերլուծել իրավական այլ ակտեր, որոնց շարքում առանցքային է մասնավորապես՝ քրեական օրենսդրությունը, իսկ կոնկրետ հանցագործության առանձնահատկություններից էլնելով՝ նաև քաղաքացիական օրենսդրությունը և իրավական այլ ակտերը:

Այս հետևությունը պայմանավորված է մասնավորապես այն հանգամանքով, որ **«հանցագործությամբ անմիջականորեն պատճառված գույքային, ֆիզիկական և բարոյական վնաս»** հասկացությունների պարզաբանումը հնարավոր չէ միայն քրեական դատավարության օրենսդրությամբ, դա հնարավոր է նախևառաջ քրեական օրենսգրքի Հատուկ մասի կոնկրետ հանցակազմերի, առանձին դեպքերում՝ նաև քաղաքացիական օրենսդրության և իրավական այլ ակտերի վերլուծության միջոցով, որոնք սկզբունքային նշանակություն ունեն քրեական դատավարությունում անձին տուժող (նաև քաղաքացիական հայցվոր) ճանաչելու հարցերը լուծելու համար:

Այլ կերպ ասած՝ տուժողը միայն քրեադատավարական հասկացություն չէ, այն միջճյուղային, նախևառաջ քրեաիրավական հասկացություն է²: Հետևաբար, քրեական դատավարությունում տուժող ճանաչելու հարցը ճիշտ լուծելու համար մեթոդաբանական նշանակություն ունի քրեական, քրեադատավարական, ինչպես նաև կոնկրետ հանցագործության բնույթից և առանձնահատկություններից էլնելով՝ օրենսդրության այլ պահանջների համակարգային վերլուծությունը:

Այս տեսանկյունից համակարծիք ենք Վ. Բոժևի այն մոտեցմանը, որ խառը (քրեաիրավական և դատավարական) հարցեր հետազոտելիս պետք է նկատի ունենալ, որ քրեական դատավարության գոյությունը պայմանավորված (դետերմինացված) է քրեական իրավունքով: Քրեական դատավարությունը համարվում է քրեական օրենքի նորմերի կիրառման եզակի խողովակ և քրեաիրավական հարաբերությունների սուբյեկտների կողմից իրենց նյութաիրավական պահանջները իրականացնելու եզակի եղանակ: Քրեական իրավունքը ազդում է քրեական դատավարության մի շարք նորմերի, նույնիսկ ինստիտուտների ձևավորման վրա, իսկ քրեական դատավարությունը, իր հերթին, ստեղծում

² Այս մասին տե՛ս նաև **Красиков А. Н.** Сущность и значение согласия потерпевшего в советском уголовном праве. Саратов, 1976, **Божьев В.** Предпосылки обеспечения интересов потерпевшего в уголовном процессе // "Законность", 2005, № 11:

Է նախադրյալներ և որոշում է քրեական օրենսգրքի նորմերի կիրառման կառուցակարգերը: Ըստ այդմ՝ նյութափրավական և դատավարական մի շարք հասկացություններ և կառուցակարգեր փոխգործում են (օրինակ հանցակազմ և ապացուցման առարկա, հանցագործության սուբյեկտ և մեղադրյալ), **որոնց շարքում է նաև «տուժող» քրեադատավարական հասկացությունը**: Հեղինակը նշում է նաև, որ ցավոք այնպես է ստացվել, որ քրեական օրենսգրքում հանցագործությունից տուժող անձի բնորոշումը բացակայում է, դրա համար քրեական դատավարության օրենսգրքում օրենսդիրը ստիպված է եղել ներառել տուժողի ոչ միայն քրեադատավարական, այլև քրեափրավական հասկացությունը: Մասնավորապես նշելով, որ անձը համարվում է տուժող, եթե դրա համար առկա են նյութափրավական նախադրյալներ, այսինքն քրեորեն պատժելի վնաս, որը պատճառվել է հանցագործությամբ, օրենսդիրը դրանով իսկ տալիս է տուժողի քրեափրավական հասկացությունը: Անձին քրեական գործով տուժող ճանաչելու հարցը կարող է լուծվել միայն այն դեպքում, երբ հանցագործությամբ անձին պատճառվել է վնաս, որը նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերում³:

Այսինքն՝ քրեափրավական հարաբերության որևէ սուբյեկտի քրեական գործով տուժող ճանաչելու համար նախնառաջ անհրաժեշտ է, որ նա լինի ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այնուհետև անհրաժեշտ է պարզել, որ հանցագործությամբ նրան պատճառվել է այնպիսի գույքային, ֆիզիկական կամ բարոյական վնաս (իրավաբանական անձի դեպքում՝ բարոյական և նյութական վնաս), որը նախատեսված է քրեական օրենսգրքի համապատասխան հանցակազմում որպես դրա պարտադիր հատկանիշ, և որը պատճառելու համար նախատեսված է քրեական պատիժ (անմիջական պատճառական կապը), ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58 հոդվածի և 59 հոդվածի 5-րդ մասի ուժով նրան քրեական դատավարությունում տուժող ճանաչելու հիմք է: Այլ կերպ ասած՝ տուժող ճանաչելու որոշում կայացնելիս իրավասու սուբյեկտի տրամադրության տակ պետք է առկա լինեն բավարար հիմքեր առ այն, որ հանցագործությունից վնաս է կրել հենց ֆիզիկական կամ իրավաբանական անձը, և որ այդ վնասը հանցակազմի հատկանիշ համարվող այն վնասն է (վնասները), որը (որոնք) պատճառվել է (են) անմիջականորեն հանցագործությամբ և սահմանված է (են) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58 հոդվածում և 59 հոդվածի 5-րդ մասում:

Այս գաղափարախոսությունը համապատասխանում է հանցագործության օբյեկտի, օբյեկտիվ կողմի և հանցագործության հետևանքների վերաբերյալ քրեական իրավունքի դրույթներին:

³ Տե՛ս **Божьев В.**, նշվ. աշխ.:

ՀՀ քրեական օրենսգրքի 18 հոդվածը սահմանում է, որ հանցագործություն է համարվում հանրորեն վտանգավոր, մեղավորությամբ կատարված այն արարքը, որը նախատեսված է քրեական օրենսգրքով: Քրեական օրենսգրքի Հատուկ մասում սահմանված են քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվողի շահերին վնաս պատճառող արարքները: Հանցագործությունը ի գորու է առաջացնել բազմաթիվ հետևանքներ, որոնք կարող են լինել ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական բնույթի, իրավունքների խախտման տեսքով և այլն: Եվ որպեսզի որոշվի, թե ով կարող է լինել կոնկրետ դեպքում տուժող, անհրաժեշտ է վերլուծել կոնկրետ հանցակազմը և նախևառաջ այդ հանցագործության օբյեկտն ու օբյեկտիվ կողմը, մասնավորապես այն, թե ինչ շահի պաշտպանության համար է քրեականացված կոնկրետ արարքը, և ինչ շահի խախտման և վնաս պատճառելու համար է նախատեսված քրեական պատասխանատվությունը: Այս հանգամանքի հաշվառմամբ է, որ տուժող սուբյեկտի հասկացությունը սահմանելիս օրենսդիրը քրեական դատավարության օրենսգրքում պարտադիր պայման է նախատեսել հանցագործության և տուժողի կրած գույքային, բարոյական կամ ֆիզիկական վնասի (իրավաբանական անձի դեպքում՝ բարոյական և նյութական վնաս) միջև անմիջական պատճառական կապը⁴:

Դատախազաքննչական ձևավորված պրակտիկայի ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տալիս, որ քրեական գործերով տուժող ճանաչելու հարցը լուծելիս իրավասու մարմինները հաճախ թույլ են տալիս քրեադատավարական, քրեաիրավական և այլ օրենսդրության պահանջների խախտում և քրեական վարույթ են ներգրավում իրավունքի այնպիսի սուբյեկտներ, որոնք քրեական դատավարությունում չեն կարող ճանաչվել տուժող, համապատասխանաբար՝ նաև օգտվել տուժողի իրավունքներից: Այդպիսի պրակտիկան առավել տարածված է պետության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով, երբ տուժող են ճանաչվում պետական մարմինները, առանձին դեպքերում նաև պետությունը:

Սույն հոդվածի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության օրինակով կփորձենք ցույց տալ այն հայեցակարգը, որը գործող քրեադատավարական օրենսդրությամբ դրված է պետության՝ որպես հանցագործությունից տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու հիմքում:

Այս առումով հատկանշական է հատկապես ՀՀ պաշտպանության

⁴ Այս մասին մանրամասն տե՛ս **Ս. Մարաբյան**, Քրեական դատավարությունում հայց հարուցելու և հայցվոր ճանաչելու հիմնահարցերն ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի // ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմնախնդիրներին նվիրված գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2014, էջ 374-401:

նախարարության XY գորամասի պահեստապետ Ա.Ա.-ի կողմից առանձնապես խոշոր չափերի յուրացում կատարելու դեպքին վերաբերող թիվ ԵԱՆԴ/0025/11/16 քրեական գործը:

Բանն այն է, որ սույն քրեական գործով քննիչի 18.12.2015 թ. որոշմամբ տուժող է ճանաչվել ՀՀ պաշտպանության նախարարությունը, ընդ որում՝ մեղադրյալին առաջադրված մեղադրանքի բովանդակությունից և տուժող ճանաչելու մասին որոշումից երևում է, որ մեղադրյալին մեղադրանք է առաջադրվել պաշտպանության նախարարությանը պատկանող գույքի հափշտակության համար, որը կատարվել է յուրացման եղանակով, և որի հետևանքով ՀՀ պաշտպանության նախարարությանը պատճառվել է գույքային վնաս:

Չհամաձայնվելով նախաքննական մարմնի կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանը տուժող ճանաչելու դիրքորոշմանը՝ նկատենք, որ նախարարությանը տուժող ճանաչելիս նախաքննական մարմինը պատշաճ վերլուծության չի ենթարկել ոչ միայն քրեադատավարական օրենսդրության պահանջները, այլև քրեական, քաղաքացիական օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջները:

ՀՀ քրեական օրենսգրքի վերլուծությունից երևում է, որ յուրացման համար քրեական պատասխանատվություն և պատիժ սահմանող 179 հոդվածն ընդգրկված է «Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 21-րդ գլխում, ինչը նշանակում է, որ այն ոտնձգում է սեփականության իրավունքի որևէ սուբյեկտի սեփականության դեմ և վնաս պատճառում սեփականատիրոջ գույքային իրավունքներին:

Այսինքն՝ հիշյալ հանցագործության օբյեկտը սեփականությունն է⁵:

Սեփականության հետ կապված հարաբերությունները կանոնակարգված են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, որի 166 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո»**, իսկ 168 հոդվածի համաձայն՝ **«1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը պետական սեփականություն է: 2. Քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ համայնքներին չպատկանող հողը և բնական այլ պաշարները պետական սեփականություն են: 3. Պետական բյուջեի միջոցները Հայաստանի Հանրապետության սեփականությունն են»**, ինչը նշանակում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 179 հոդվածով քրեաիրավական պաշտպանության տակ է վերցված քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետության և համայնքների սեփականությունը, և այդ հոդվածով նախատեսված արարքի կատարմամբ վնաս է պատճառվում հենց վերոնշյալ սուբյեկտների սեփակա-

⁵ Տե՛ս «ՀՀ քրեական իրավունք», Հատուկ մաս, Եր., 2006, էջ 344-345:

նությանը: Այդ սուբյեկտներից բացի, ՀՀ-ում սեփականության իրավունքի այլ սուբյեկտ գոյություն չունի, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի վերոհիշյալ գլխում ընդգրկված հանցակազմերով քրեաիրավական պաշտպանության տակ չի վերցված որևէ **պետական մարմնի** սեփականությունը, ըստ այդմ՝ հիշյալ գլխում նախատեսված հանցագործություններից որևէ մեկով, այդ թվում՝ յուրացմամբ չի կարող խախտվել որևէ պետական մարմնի սեփականության իրավունքը:

Պետական մարմինները, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 129 և 163 հոդվածների և 168 հոդվածի 4-րդ մասի դրույթների, իրավունք ունեն տնօրինելու, տիրապետելու, օգտագործելու բացառապես պետական սեփականությունը, ըստ այդմ՝ նրանց (պետական մարմինների) տիրապետման տակ գտնվող գույքը ոչ թե նրանց, այլ պետության սեփականությունն է, իսկ այդ մարմինները լիազորված են սեփականատիրոջ իրավունքներն իրականացնելու հենց պետության անունից:

Ասվածից բացառություն չէ նաև ՀՀ պաշտպանության նախարարությունը:

Մեր այս հետևությունները, բացի ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, ուղղակիորեն բխում են նաև ՀՀ պաշտպանության նախարարության կարգավիճակին և դրանից բխող լիազորությունների վերաբերող ՀՀ կառավարության որոշումներից և այլ իրավական ակտերից:

Այսպես, ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 25-ի № 1554-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կանոնադրության» (հավելված №1) 30-րդ կետի համաձայն՝ *«Նախարարության գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անունից նախարարության կնքած գործարքներով ձեռք բերված և նախարարության տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը **հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախարարությանը կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասությունն»***, իսկ նույն որոշման 35-րդ կետի համաձայն՝ *«Նախարարության պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը»*: Նույն որոշման 13-րդ կետի համաձայն՝ *«13. Նախարարը՝ (...) 10) իր իրավասության սահմաններում տալիս է Հայաստանի Հանրապետության անունից **հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր»***:

ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՀ-174-Ն

հրամանագրի հավելվածի 136-րդ կետի համաձայն՝ *ՀԳՄ-ի⁶ ղեկավարը՝ «(...) 8) վերահսկողություն է իրականացնում ՀԳՄ-ի կողմից պետական գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ. (...), 13) իր իրավասության սահմաններում ... տալիս է Հայաստանի Հանրապետության կամ ՀԳՄ-ի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր. (...)*»:

Վերը բերված իրավանորմերի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված գույքը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, այլ ոչ թե նախարարությանը կամ նրան ենթակա որևէ ստորաբաժանման, իսկ այդ գույքի հափշտակության կամ այլ եղանակով վնաս պատճառելու դեպքում, փաստորեն, վնաս է կրում Հայաստանի Հանրապետությունը, և ոչ թե նախարարությունը կամ նրան ենթակա այլ ստորաբաժանում: Այս հանգամանքը հաստատվում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-150/07 որոշմամբ. *«ՀՀ պաշտպանության նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների գույքը, այդ թվում նաև տրանսպորտային միջոցները, պետության՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունն են: Պետական սեփականության օբյեկտների որոշակի մասը բացառիկ սեփականության իրավունքով պատկանում է միայն Հայաստանի Հանրապետությանը: Դրանց շարքն են դասվում նաև զինված ուժերի ունեցվածքը, պաշտպանական կառույցները և այլն, որոնք սեփականության իրավունքով չեն կարող պատկանել ոչ միայն քաղաքացիներին, այլև իրավաբանական անձանց և համայնքներին»:*

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ նախաքննական մարմինն իրավունք չունի պաշտպանության նախարարությանը քրեական գործով ճանաչել տուժող, քանի որ քրեաիրավական պաշտպանության օբյեկտ է ոչ թե նախարարության, այլ պետության սեփականությունը: Եթե քննարկվող գործով պետք է տուժող ճանաչվեր իրավունքի որևէ սուբյեկտ, ապա ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսդրության դրույթների ուժով դա պետք է լիներ պետությունը, սակայն դա էլ անթույլատրելի է, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում սահմանված է, որ տուժող կարող է ճանաչվել բացառապես ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Ուշագրավ է նաև այն, որ թեև վերոնշյալ գործով ՀՀ պաշտպանության նախարարությունն է տուժող ճանաչվել, սակայն ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցչի կողմից դատարան ներկայացրած հայցադիմումի մեջ նշված է եղել, որ ամբաստանյալից հո-

⁶ Նույն հրամանագրի հավելվածի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ ՀԳՄ նշանակում է «հանրապետական գործադիր մարմին», որի տակ հասկացվում են ՀՀ նախարարությունները և կառավարության արևելք պետական կառավարման մարմինները:

գուտ **ՀՀ պետական բյուջեի** (այլ ոչ թե **ՀՀ պաշտպանության նախարարության**) պետք է բռնագանձել գումար՝ **որպես հանցագործությամբ պետությանը պատճառված նյութական վնասի հատուցում** (այլ ոչ թե **ՀՀ պաշտպանության նախարարությանը պատճառված վնասի հատուցում**): Այսինքն՝ պաշտպանության նախարարության պաշտոնական դիրքորոշումը ևս հաստատում է, որ պաշտպանության նախարարության սեփականության իրավունքը հանցագործությամբ չի կարող խախտվել, իսկ նշված հանցագործության հետևանքով վնասը պատճառվել է պետությանը, այլ ոչ թե նախարարությանը:

Եթե հիմք ընդունենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և ՀՀ Կառավարության՝ վերը բերված որոշումներում առկա լուծումների տրամաբանությունը, ապա պաշտպանության նախարարությունը առավելագույնը կարող էր լինել տուժողի, այսինքն՝ պետության ներկայացուցիչ, քանի որ նա էր պետության անունից իրականացնում **սեփականատիրոջ իրավունքները (քաղ. օր.-ի 168 հոդված, մաս 4-րդ և 129 հոդված)**, սակայն, ինչպես երևում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58 և 59 հոդվածներից, քրեական դատավարությունում **պետությունը** տուժող չի կարող ճանաչվել, թեև քրեաիրավական և քաղաքացիաիրավական առումով այդպիսին է, ուստի խոսք չի կարող լինել նաև պաշտպանության նախարարության՝ որպես պետության ներկայացուցչի մասին: Առավել ևս, որ քրեական դատավարության օրենսգրքից ուղղակիորեն հետևում է, որ որևէ անձ կամ մարմին ճանաչվում է տուժողի ներկայացուցիչ բացառապես տուժող ճանաչվելուց հետո, իսկ քանի որ պետությունը քրեական դատավարությունում տուժող չի կարող ճանաչվել, ուստի նախարարությունը չի կարող ճանաչվել տուժողի ներկայացուցիչ: Այս տեսանկյունից անօրինական է նաև այն դատական պրակտիկան, երբ նախաքննական մարմինները պետությանն են ճանաչում տուժող⁷:

Մեր հարցումներին ի պատասխան՝ դատախազաքննչական մարմինների աշխատակիցները հայտնում էին, որ պաշտպանության նախարարությունն ունի իրավաբանական անձի կարգավիճակ, ուստի դրանով է պայմանավորված պաշտպանության նախարարությանը տուժող ճանաչելը: Նույն բացատրությունն էր տրվում նաև հարկային հանցագործությունների վերաբերյալ գործերով ֆինանսների նախարարությանը կամ ՊԵԿ-ին տուժող ճանաչելու կապակցությամբ: Իսկ այն հարցին, թե այդ դեպքում ինչով է պայմանավորված առանձին գործերով պետությանը տուժող ճանաչելու հանգամանքը, նրանք փոր-

⁷ Տե՛ս, օրինակ, ԱՐԱԴ1/0008/01/15 քրեական գործը, որում քննիչի կողմից որոշում է կայացվել Հայաստանի Հանրապետությանը տուժող ճանաչելու մասին: Ընդ որում՝ սույն գործով ևս մեղադրյալին մեղադրանք է առաջադրված եղել ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայության տակ գտնվող համապատասխան գորամասից պահեստապետի կողմից յուրացում կատարելու համար:

ձում էին դա բացատրել սխալմունքով կամ այն բանով, որ պետությունն առանձին դեպքերում օգտվում է իրավաբանական անձի իրավունքներից:

Ինչևէ, չհամաձայնելով նման դատողությունների հետ, նշենք, որ դրանք անհիմն են և չեն բխում գործող օրենսդրության պահանջներից:

ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի «ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» թիվ ՆՇ-174-Ն հրամանագրի հավելվածի համաձայն՝ «(...) 7. Կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր մարմինները (այսուհետ՝ ՀԳՄ), որոնք ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

8. ՀԳՄ-ներն են՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները: (...)»:

ՀՀ կառավարության 2008 թ.-ի դեկտեմբերի 25-ի № 1554-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կանոնադրության» (հավելված № 1) համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) հանրապետական գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

2. Նախարարությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության պաշտպանության սպահովման, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի (այսուհետ՝ զինված ուժեր) զարգացման և մարտական պատրաստականության համար:(...)»:

Վերոնշյալ իրավական ակտերի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ պաշտպանության նախարարությունն օժտած չէ **իրավաբանական անձի** կարգավիճակով (**որի հատկանիշները, ներկայացվող պահանջները և այլն, կանոնակարգված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ գլխում ընդգրկված նորմերով**), այն հանրապետական գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը, ունի կոնկրետ ինդիքներ ու նպատակներ և իրականացնում է դրանցից բխող կոնկրետ գործառույթներ, որոնք որևէ առնչություն չունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրավաբանական անձի կարգավիճակին, իրականացրած գործառույթներին և դրա ստեղծման նպատակներին:

Փաստելով, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարգավի-

ճակը, իրավունքները և պարտականությունները կանոնակարգող ՀՀ Կառավարության 2008 թ.-ի դեկտեմբերի 25-ի № 1554-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կանոնադրության» հավելվածներում ամրագրված է, որ նախարարության կառուցվածքում գործող տարբեր ստորաբաժանումներ (օրինակ՝ աշխատակազմը, գլխավոր շտաբը և այլն) իրենց իրավասության սահմաններում կարող են ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող և այլն, միաժամանակ արձանագրենք, որ դա չի նշանակում, որ հիշյալ պետական մարմինները դրանով դառնում են հանցագործությունից տուժող, քանի որ իրավունքի սուբյեկտը պետությունն է, այլ ոչ թե այդ մարմինները⁸:

Բացի այդ, մենք այն կարծիքին ենք, որ հիշյալ ենթաօրենսդրական ակտերով նախատեսված իրավական հնարավորությունները չեն կարող իրականացվել քրեական դատավարությունում, քանի որ քրեական դատավարությունում տուժող կարող է ճանաչվել բացառապես ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որպիսին նախարարությունը չի հանդիսանում, որքան էլ պրակտիկայում փորձեն հարմարեցնելու սկզբունքով դրանք նույնացնել: Ավելին, մեր խորին համոզմամբ, այդ իրավական հնարավորությունները վերաբերում են վարչական և քաղաքացիական դատավարություններին:

Վերոնշյալ պատճառաբանություններով մենք համամիտ չենք նաև տեսության մեջ առկա այն մոտեցմանը, ըստ որի՝ քանի որ պետությունը վերացական կազմավորում չէ, այլ հանրային քաղաքական իշխանության կազմակերպման ձև է, որի օբյեկտիվ արտացոլումը պետական մարմինների համակեցությունն է, ուստի պետության գույքային իրավունքների դեմ կատարված հանցագործությունների դեպքում վնասը պատճառվում է պետության անունից հանդես եկող կոնկրետ կազմավորմանը, և «իրավաբանական անձ» հասկացության տակ պետք է հասկանալ նաև պետական մարմիններին ու նրանց պետք է թույլատրել քրեական դատավարությունում որպես քաղաքացիական հայցվոր հանդես գալ դատախազի հետ միասին: Այն, որ դատախազի հետ միաժամանակ այլ պետական մարմինները ևս պետք է իրավունք ունենան քրեական դատավարությունում ներկայացնելու պետության շահերը, կարծում ենք՝ խնդրահարույց չէ, ավելին՝ պետության գույքային իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք է: Սակայն խնդիրն այն է, որ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այդ հնարավորությունը ինչպես քաղաքացիական և վարչական դատավարությունները, ավելին՝ դա չի կարող կատարվել պետական

⁸ Տե՛ս **Бокв Д. М.** Гражданский иск прокурора в уголовном процессе в защиту интересов государства. Канд. дисс. М., 2012, էջ 5:

մարմիններին «իրավաբանական անձ» հասկացության ներքո տեղավորելով կամ հարմարեցնելով, հատկապես երբ խոսքը տուժող, այլ ոչ թե հայցվոր սուբյեկտի մասին է:

Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ նախաքննական մարմինները պետությանը և պետական մարմիններին տուժող ճանաչելով ոչ միայն հաշվի չեն առնում քրեական օրենսդրությունը, այլև քրեադատավարական հարաբերություններում տարածական մեկնաբանություն են տալիս քաղաքացիական օրենսդրությանը: Այս տեսանկյունից համամիտ ենք ՌԴ ֆինանսների նախարարությանը և Դաշնային գանձապետարանին քրեական գործով տուժող ճանաչելու անթույլատրելիության վերաբերյալ այն տեսակետին, որ քաղաքացիական և քրեադատավարական օրենսդրությունները տարբեր կերպ են որոշում հանրային-իրավական կազմավորումների մասնակցության աստիճանը համապատասխան իրավահարաբերություններում: Քաղաքացիական օրենսդրությունը նախատեսում է պետության մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերություններին քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով: Այն նաև նախատեսում է, որ այդ մարմիններն իրավունք ունեն իրենց գործողություններով ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ ու պարտականություններ, իրենց իրավասության սահմաններում դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող: Դրա հետ մեկտեղ ֆինանսական մարմինները կարող են դատարաններում հանդես գալ պետության անունից որպես պատասխանող, եթե հայցը ներկայացվել է նրանց դեմ՝ պետական բյուջեից վնասի փոխհատուցման նպատակով: Քրեադատավարական օրենսդրությունը, ընդհակառակը, չի նախատեսում քրեադատավարական հարաբերություններին հանրային-իրավական կազմավորումների մասնակցությունը, այդ թվում՝ որպես տուժող կամ քաղաքացիական հայցվոր, քանի որ հանցագործությամբ վնասը պատճառվում է հենց հանրային-իրավական կազմավորմանը՝ պետությանը, այլ ոչ թե ֆինանսների նախարարությանը կամ նրա տարածքային մարմինն՝ որպես իրավաբանական անձի: Հետևաբար, ոչ պետությունը, ոչ նրա մարմինները չեն կարող քրեական գործով ճանաչվել տուժող: Այսինքն՝ ֆինանսական և այլ պետական մարմինները չեն կարող քրեական գործով լինել հանրային-իրավական կազմավորումների ներկայացուցիչներ: Նման դեպքերում պետության անունից հանդես է գալիս դատախազը և պաշտպանում պետության գույքային շահերը⁹:

⁹ Ст' u Письмо Минфина РФ от 09.08.2006 № 08-04-14/4048 «О привлечении Минфина РФ в качестве потерпевшего по уголовным делам в связи с причинением ущерба государству» // http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_63131/ . Письмо Федерального Казначейства от 27 июля 2006 г. № 42-7.1-15/9.2-311 «О привлечении представителей органов Федерального Казначейства потерпевшими по возбуждаемым уголовным делам» // http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_62445/

Այսպիսով, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում քրեադատավարական հարաբերություններում պետական մարմինների՝ որպես տուժող կամ քաղաքացիական հայցվոր հանդես գալու իրավական հիմքերը և պայմանները: Այն դեպքում, երբ հանցագործությամբ գույքային վնասն անմիջականորեն պատճառվում է պետությանը, ապա վերջինիս անունից (ըստ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ Սահմանադրության) նրա իրավունքները և օրինական շահերը ի պաշտոններկայացնում և պաշտպանում է դատախազը՝ քրեական հետապնդում հարուցելով, հետաքննության և նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնելով, դատարանում մեղադրանքը պաշտպանելով, դատարանի կայացրած դատական ակտերը բողոքարկելով և այլն, իսկ գույքային վնասի առկայության դեպքում՝ ամբաստանյալի կամ նրա համար գույքային պատասխանատվություն կրող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դեմ դատարանում քաղաքացիական հայց հարուցելու միջոցով: Հետևաբար, քրեական դատավարությունում, դատախազից բացի, որևէ այլ սուբյեկտի, ի դեմս տուժող ճանաչված պետական մարմինների, որպես սուբսիդիար մեղադրողի պետության անունից հանդես գալու անհրաժեշտությունը բացակայում է, դրա համար էլ օրենսդիրը չի նախատեսել պետական մարմիններին քրեական դատավարությունում տուժողի և հայցվորի կարգավիճակով հանդես գալու իրավական հնարավորությունը:

Ի վերջո, տուժողը՝ քրեական դատավարությունում որպես մեղադրանքի կողմի սուբյեկտ, մեղադրանքի պաշտպանության գործում չունի ավելի լայն իրավունքներ, քան ի պաշտոնե գործող դատախազը, ուստի վերջինիս կողմից դատարան ներկայացված մեղադրանքի պաշտպանությանը, նրանից բացի, պետական այլ մարմնի մասնակցություն օրենսդիրը չի նախատեսում: Նույն կերպ օրենսդիրը ավելորդ է համարում պետական այլ մարմնի կողմից քրեական դատավարությունում պետության գույքային շահերի պաշտպանության հայց հարուցելու հնարավորություն նախատեսելը, որը լիարժեք կարող է իրականացնել դատախազը. ըստ այդմ՝ հանցագործությամբ պետությանը պատճառված վնասի հատուցման նպատակով օրենսդիրը քրեական դատավարությունում հայց հարուցելը սահմանել է որպես դատախազի բացառիկ լիազորություն:

Այս դատողությունները հիմնված են մասնավորապես ՀՀ Սահմանադրության 103 հոդվածի, քրեական դատավարության օրենսգրքի 52 և 156 հոդվածների, ինչպես նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 1, 2 և 27 հոդվածների դրույթների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29, 37 և վարչական դատավարության օրենսգրքի 14 և 15 հոդվածների համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ պետության շահերը պաշտպա-

նել կարող են ոչ միայն դատախազը, այլև պետական այլ մարմին և դրա պաշտոնատար անձը, ընդ որում՝ այդ նույն նորմերից հետևում է, որ դրանցում տարբերակված են իրավաբանական անձինք և պետական մարմինները՝ որպես քաղաքացիական կամ վարչական դատավարությունում հանդես եկող ինքնուրույն սուբյեկտներ. դրանք որպես դատավարության կողմեր չեն նույնանում, ինչը նշանակում է, որ քրեական դատավարությունում դրանք չեն կարող նույնացվել, ինչպես փորձում են կատարել դատախազության և քննչական մարմինների աշխատակիցները:

Այս նույն տրամաբանությունն է բնկած նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի հիմքում, որի վերլուծությունից աներկբայորեն հետևում է, որ քրեական դատավարության կարգով պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայց հարուցելուց զատ, **որը դատախազի բացառիկ իրավունքն (պարտականությունը) է**, այլ դատավարություններում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու դատախազի բացառիկ իրավունքը (պարտականությունը) չէ, այն դատախազի համար լրացուցիչ, հավելյալ իրավունք է, իսկ **դատախազի պարտականություն է դառնում բացառապես այն դեպքերում**, երբ (1) այլ մարմինները չեն հարուցում հայցեր, կամ (2) դատախազին հայց հարուցելու միջնորդությամբ դիմում են այլ մարմինները, կամ (3) եթե պետք է հայց հարուցել այլ երկրների դատարաններում, կամ (4) պետական շահերի խախտում է տեղի ունեցել այն հարցերով, որոնցով հայց ներկայացնելը օրենսդրությամբ վերապահված չէ որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի:

Ավելին, դատախազի վերոնշյալ իրավունքները պատշաճ իրացնելու և պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներից ելնելով, ՀՀ Նախագահի՝ *«Պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին»* 2005 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ ՆՀ-189-Ն հրամանագրում ամրագրված են պետական մարմինների և դատախազության համագործակցության հիմքերը, կարգը և պայմանները. *«1. Պետական մարմինները Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն են ներկայացնում. ա) դատարաններում պետության գույքային շահերի պաշտպանության՝ 10 մլն դրամ հայցագինը գերազանցող, բարդ գործերով, մի քանի պետական մարմինների կողմից կամ պետության կենսական շահերին առնչվող հայց ներկայացվելու, ինչպես նաև պետության գույքային շահերին առնչվող՝ ընդդեմ պետական մարմինների ներկայացված նույնաբնույթ հայցի (հակընդդեմ հայցի) և դրանց քննության արդյունքների մասին հաղորդում՝ եռօրյա ժամկետում, բ) անհրաժեշտության դեպքում, հայց հարուցելու միջնորդություն՝ մինչև սույն կետի «ա» ենթակետում նշված բնույթի հայց ներկայացնելը, գ)*

հաշտության համաձայնության պայմանները՝ նախքան պետության գույքային շահերին առնչվող քաղաքացիական գործերով հաշտության համաձայնություն կնքելը, դ) պետության գույքային շահերին առնչվող, սակայն առանց պետական համապատասխան մարմնի մասնակցության քննված գործերով կայացված դատական ակտերի վերաբերյալ տեղեկություններ՝ եռօրյա ժամկետում»:

Հետևաբար, եթե քաղաքացիական և վարչական դատավարություններում պետության անունից, դատախազությունից բացի, այլ պետական մարմինների՝ որպես դատավարության կողմ հանդես գալը իրավաչափ է, քանի որ ուղղակիորեն ամրագրված է «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերով և բացի այդ՝ բխում է տվյալ իրավահարաբերությունների բնույթից, առանձնահատկություններից, ապա նույնը չի կարելի ասել քրեական դատավարության մասին, որում օրենսդիրը չի նախատեսել, բացի դատախազից, որևէ այլ պետական մարմնի՝ պետության անունից հանդես գալու իրավական հիմքերը, կարգը և պայմանները: Թե որքանով է օրենսդրի մոտեցումը հիմնավոր, այլ հարց է: Փաստն այն է, որ գործող քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում պետությանը և պետական մարմիններին քրեական դատավարությունում տուժող ճանաչելու հնարավորություն: Հետևաբար, դատական պրակտիկայում ՀՀ պաշտպանության նախարարությանը կամ պետությանը տուժող ճանաչելով՝ նախաքննական մարմինները թույլ են տալիս Օրենսգրքի 58 և 59 հոդվածների խախտում: Դրա հետևանքով քրեական դատավարությունում տուժող է ճանաչվում և ըստ այդմ՝ օգտվում է տուժողի իրավունքներից ու պարտականություններից այնպիսի սուբյեկտ, որի մասնակցությունը քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ, ուստի անհրաժեշտ է այդ պրակտիկան վերացնել:

Այս հանգամանքի կարևորությունը պայմանավորված է ոչ միայն քրեադատավարական օրինականության ապահովման հրամայականով, այլև արդարադատության շահով, ինչպես նաև անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման անհրաժեշտությամբ: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 264 հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ ԱՐԱԴ1/0026/01/14 քրեական գործով, որում տուժող էր ճանաչվել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը, այն դեպքում, երբ հանցագործությունը պետության շահերի դեմ էր, դատարանը ամբաստանյալի նկատմամբ նշանակել էր պատիժ և համաներման կիրառմամբ՝ ազատել պատժից: ՊՈԱԿ-ի տնօրենությունը բողոքարկել էր դատական ակտը մինչև Վճռաբեկ դատարան այն պատճառաբանությամբ, որ իբրև թե համաներում չպետք է կիրառվեր, և բացի այդ՝ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ,

որի պատճառով 2015 թվականի մայիսի 12-ի դատավճիռը, որը թողնվել էր անփոփոխ վերադաս դատարանների կողմից, ուժի մեջ էր մտել և ուղարկվել կատարման 10.03.2016 թվականին:

Քննարկվող հարցն առավել ամբողջական ներկայացնելու համար, կարծում ենք, ճիշտ կլինի համառոտ համեմատական վերլուծության ենթարկել նաև նախկին քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգումները և ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի համար ուղղորդող նշանակություն ունեցած և, ըստ էության, դրա հիմքում դրված ԱՊՀ երկրների համար մշակված 1996 թվականի նմուշային քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգումները:

Նմուշային օրենսգրքի վերլուծությունից հետևում է, որ դրանում տարանջատված են տուժած և տուժող սուբյեկտները. տուժող սուբյեկտի կարգավիճակին նվիրված է օրենսգրքի 90 հոդվածը, իսկ տուժածին՝ 89 հոդվածը: Ավելին՝ ըստ այդ հոդվածներում տրված կանոնակարգումների՝ «տուժածն» ավելի լայն հասկացություն է, քան «տուժողը»: Եթե տուժող կարող է ճանաչվել բացառապես ֆիզիկական անձը, ապա տուժած կարող է ճանաչվել սուբյեկտների լայն շրջանակ, որոնց շարքում նաև պետական հիմնարկները, կազմակերպությունները: Ավելին, ըստ 89 հոդվածի 4-րդ մասի՝ տուժածը, ի դեմս պետական հիմնարկների և կազմակերպությունների, իրավունք չունի հետ վերցնելու իր կողմից տրված բողոքը: Օրենսգրքի 33 հոդվածում սահմանված է, որ դատախազն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ հարուցելու քրեական գործ քրեական զանցանքի կապակցությամբ և իրականացնելու քրեական հետապնդում քրեական դատավարության ցանկացած փուլում, եթե արարքը առնչվում է **հասարակության և պետության էական շահերին**: Այսինքն՝ ըստ նմուշային օրենսգրքի՝ պետության դեմ ուղղված հանցագործություններով, քանի որ պետությունը և պետական հիմնարկները, ձեռնարկությունները տուժող չեն ճանաչվում, քննությունն իրականացվում է բացառապես հանրային կարգով, և դատախազն է ներկայացնում պետության շահերը քրեական վարույթի ընթացքում:

Ինչևէ, նմուշային օրենսգրքի կանոնակարգումների տրամաբանությունը հասկանալի է և իրավաչափ, քանի որ պետությունը և պետական հիմնարկները, ձեռնարկությունները, լինելով տուժած, չեն ճանաչվում տուժող, ուստի գործի քննությունը տվյալ դեպքում իրականացվում է հանրային մեղադրանքի կարգով՝ ի պաշտոնե գործող դատախազի նախաձեռնությամբ:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ գործող քրեական դատավարության օրենսգրքի հիմքում ընկած հայեցակարգը (նմուշային օրենսգրքի իմաստով) չի ենթադրում պետության դեմ ուղղված հանցագործություններով պետությանը և պետական հիմնարկներին, ձեռնարկություններին տուժող ճանաչելը, դեռ ավելին՝ այն ուղղակիորեն են-

թաղրում է, որ պետության շահերի դեմ ուղղված հանցագործություններով վարույթը պետք է նախաձեռնվի հանրային մեղադրանքի կարգով¹⁰: Մինչդեռ գործող քրեական դատավարության օրենսգիրքը նմուշային օրենսգրքի վերոնշյալ կանոնակարգումներն ուղղակիորեն չի փոխառել, որի հետևանքով դատական պրակտիկայում որոշակի անորոշություն է առաջացել:

Անդրադառնալով 1961 թվականի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին՝ պետք է փաստել, որ, ի տարբերություն գործող օրենսգրքի և նմուշային օրենսգրքի, դրանում (հոդվածներ 48, 49, 50, 52, 129, 130) պետական մարմինները¹¹ ոչ թե տուժող էին ճանաչվում, այլ քաղաքացիական հայցվոր: Այլ կերպ ասած՝ նախկին օրենսդրությամբ եթե պետությունը, ի դեմս համապատասխան հիմնարկների, կազմակերպությունների և ձեռնարկությունների, գույքային վնաս էր կրում հանցագործությամբ, ապա թե՛ պետությունը, թե՛ հիմնարկ-ձեռնարկությունները և կազմակերպությունները տուժող չէին ճանաչվում, սակայն վերջիններս պետության գույքային շահերի պաշտպանության նպատակով իրավունք ունեին հարուցելու քաղաքացիական հայց և ըստ այդմ՝ քրեական վարույթում հանդես գալու որպես քաղաքացիական հայցվոր: Այս մոտեցումը տրամաբանական էր, քանի որ օրենքով պետության գույքային շահերի պաշտպանությունը դատախազի բացառիկ լիազորությունը չէր, իսկ քանի որ գործող օրենսգրքով պետության գույքային շահերի պաշտպանության հայց հարուցելը դատախազի մենաշնորհն է, օրենսդիրը չի նախատեսել նաև պետական մարմիններին քաղաքացիական հայցվորի կարգավիճակով հանդես գալու հնարավորությունը: Այլ հարց է, որ ճիշտ կլինե՞ր, եթե օրենսդիրը գործող օրենսդրությամբ նախատեսեր նաև պետական մարմիններին հայցվորի կարգավիճակով հանդես գալու հնարավորությունը, իսկ դատախազը հսկողություն իրականացնե՞ր նաև դրանց գործունեության նկատմամբ, հատկապես որ գործող օրենսդրությամբ նախատեսված է, որ դատախազն իրավունք ունի հայց հարուցելու բացառապես դատարանում, մինչդեռ հաճախ անհրաժեշտություն է առաջանում նաև նախա-

¹⁰ Պետք է նկատել, որ դատախազները հաճախ փաստարկ էին ներկայացնում նաև մասնավոր մեղադրանքի կարգով քննվող հանցագործությունների վերաբերյալ, որպեսզի հիմնավորեին, որ պետական մարմիններին պետք է ճանաչել տուժող, որպեսզի մեղադրյալը հնարավորություն ունենա հաշտվելու և ըստ այդմ՝ քրեական գործի վարույթը կարճելու, հակառակ դեպքում, ըստ նրանց, ստացվում է, որ խախտվում է մեղադրյալի իրավունքները: Այդ մոտեցումների հետ համաձայն չլինելով՝ կարող ենք նշել, որ նման իրավիճակների համար կարող է կիրառելի լինել դատախազի հայեցողական քրեական հետապնդման լիազորության կիրառմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու կառուցակարգը, որը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37 հոդվածում:

¹¹ Օրենսգիրքը օգտագործում էր հիմնարկ, ձեռնարկություն, կազմակերպություն այլ ոչ թե պետական մարմին եզրույթները, սակայն նկատի ունենալով, որ այն ժամանակ դրանք բոլորը պետական էին, քանի որ մասնավոր ոչինչ չկար, դրանք համարժեք հասկացություններ են:

քննության փուլում հայց հարուցելու, որպեսզի հնարավոր լինի կիրառել նաև հայցի ապահովման միջոցները, որը կլինի պետության գույքային շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք: Սակայն քանի դեռ նման կարգավորումներ օրենքով նախատեսված չեն, դատական պրակտիկայում պետք է բացառել պետությանը և պետական մարմիններին տուժող ճանաչելու՝ օրենքից չբխող պրակտիկան:

Բանալի բառեր – տուժող, քաղաքացիական հայցվոր, պետություն, պետական մարմիններ, դատախազ, պետության իրավունքներ, վնասի հատուցում

СЕРГЕЙ МАРАБЯН – Проблемы защиты прав и законных интересов государства как потерпевшего в уголовном процессе РА. – В статье обосновывается, что в судебной практике по делам о преступлениях против государства нарушается закон, поскольку в качестве потерпевшего в уголовном процессе участвуют субъекты, которые согласно закону не могут быть потерпевшими.

Понятие потерпевшего в уголовном процессе не только уголовно-процессуальное, но и междисциплинарное. Поэтому в любом конкретном случае при разрешении вопроса о признании того или иного субъекта права потерпевшим необходимо вначале проанализировать состав преступления, по которому возбуждено уголовное дело. Кроме того, необходимо в зависимости от особенностей конкретного преступления проанализировать гражданское и иное законодательство.

В статье утверждается, что в соответствии с действующим Уголовно-процессуальным кодексом государство и государственные органы не могут быть признаны потерпевшими. Права и интересы государства как потерпевшего по должности в силу закона и Конституции осуществляет прокурор путем возбуждения уголовного преследования, защиты обвинения и предъявления иска. Следовательно, действующее законодательство не предусматривает вовлечения государственных органов в уголовный процесс в качестве жертв. Необходимо изменить судебную практику и исключить признание государственных органов потерпевшими.

Необходимо внести законодательные изменения и, опираясь на модель гражданского и административного производства, разрешить участие государственных органов в уголовном судопроизводстве, но в качестве гражданского истца. Дело в том, что согласно действующему законодательству в стадии расследования прокурор не может предъявить гражданский иск. Однако в результате предлагаемого изменения это станет возможным. Оно также послужит дополнительной гарантией защиты государственных интересов.

Ключевые слова: потерпевший, гражданский истец, государство, государственные органы, прокурор, права государства, возмещение ущерба

SERGEY MARABYAN – Issues of Protection of the Rights and Legal Interests of the State as a Crime Victim in the RA Criminal Procedure. – In the article the author analyses criminal procedural, criminal and civil legislation of RA and based on the example of the Ministry of Defense, tries to show that in judicial practice, in cases regarding the crimes against the state, entities who are not recognized as crime victims by law are actually involved in criminal procedure as crime victims.

The Author concludes that the definition of victim in criminal procedure is not only criminal procedural but interdisciplinary concept, thus in any case of solving the issue of involvement of a subject as a crime victim it is necessary to analyze corpus

delicti of the offence in regard of which the criminal case was initiated . In addition,taking into consideration the features of a certain crime, it is necessary to analyze the relevant civil or other legislation.

Based on the analysis of the legislation the author concludes that in accordance with RA current Criminal Code of Procedure the State and state bodies cannot be recognized as crime victims. According to the Constitution and laws, the rights and the interests of the State as a crime victim are represented by the Prosecutor via initiating criminal proceedings, protection of charges and submitting property claims. Therefore, the current legislation does not foresee the necessity of involving state bodies in criminal procedure as crime victims. So the judicial practice needs to be reviewed to exclude the recognition of state bodies as crime victims as it is a breach of law.

The Author concludes that certain amendments need to take place in the current legislation and it is necessary to allow the participation of the state bodies in criminal procedure (like in civil and administrative proceedings) but holding the status of plaintiff. This is essential as under current legislation no civil claim can be filled by the prosecutor at the stage of investigation while these changes will eliminate the mentioned shortcoming. It will also serve as an additional guarantee for the protection of state interests.

Key words: *victim, plaintiff, state, state bodies, prosecutor, rights of the state, compensation for damages*